ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/64 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան **«30» օգոստոսի 2019թ.**

ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հովիկ Պողոսյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության շենքեր-շինությունների պահպանման բաժնի պետ.

Անդամներ՝

Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)

Գարիկ Բոյաջյան՝ ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ,

Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)

Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ,

Տիգրան Ալեքսանյան՝ ԱԻՆ խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող.

Բացակայում է.

Արթուր Շահինյան՝ ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Անահիտ Եղիազարյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

Նիստի ընթացքում Հանձնաժողովի անդամների կողմից քննարկվեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվությունը և մասնակիցների կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

«Հայկարլի» և «Գրիման» ՍՊԸ-ները հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչպես նաև ներկայացրել են անհրաժեշտ փաստաթղթերը, ուստի Ընկերությունների կողմից ներկայացված հայտարարությունները որակվեցին իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակիցներ ճանաչել.

- «Հայկարլի» ՍՊԸ-ին՝ 1 չափաբաժնով,
- «Գրիման» ՍՊԸ-ին՝ 2 չափաբաժնով:

2) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:

3) Հաստատել ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/64 ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4) հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Հայկարլի» և «Գրիման» ՍՊԸ-ներին:

Հանձնաժողովի նախագահ՝		**Հ. Պողոսյան**
Հանձնաժողովի անդամներ՝		**Գ. Բոյաջյան**
		Հ. Ծատուրյան
		Տ. Ալեքսանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		**Ա. Եղիազարյան**